

նոյնպէս ալ զարմանալի՝ որ Մասիս լրագիրը (որ այնքան մօտ է եւ Հմուտ Մարաշու եւ Զէյթունի գործողութիւններուն) այդ լուրը առանց ամենեւին մեկ խորհրածուրեան մը հրատարակեր է, որոյ վրայ կերեւի թէ *Московскія Вѣдомости* լրագիրն անգամ մեզի պէս զարմանք կցուցընէ իրաւամբ, եւ հարկ կհամարի գոնէ մէկ քանի տողով ճշմարիտ խորհրդածութիւն մը ընել այն լրոյն վրայ:

Երկրորդ՝ թէ գաղղիական լրագրոյն խօսքերէն յայանի կտեսնուի որ լատին միսիոնարաց այս բանիս մէջ իգործ դրած նախանձայուզութիւնը, ջանքը, աշխատութիւնը այնքան մեծ է որ կրցեր են նաեւ այս անգամ կասկածելի ցուցընել հռովմէական հայոց ուղղափառութիւնը, ուստի հարկաւ հեւացընել նոյն իսկ Գերապատիւ Հասունեան-

ցին եւ նորա կուսակիցներուն եւ կամ Լիբանանու կաթողիկ կաթողիկոսին (?) գործակցութիւնը իպաշտպանութիւն Մարաշուց եւ Զէյթունց, եւ իրենց յորգորանացը մտիկ ընող Հայերուն հասկըցընել թէ կատարեալ ուղղափառ եւ հարազատ որդի հռովմէական եկեղեցւոյ լինելու համար՝ պէտք է բոլոր հայկական ծէսերն եւս մէկգի դնել, եւ Իզմիրու Ջահկեցւոց պէս բոլորովին լատինանալ:


Վերջապէս հարկ է արգեօք այս ալ աւելցընել թէ ահա այս կերպով եղած է գրեթէ ամէն ժամանակ լուսաւորչական Հայերէն ումանց կաթողիկ դառնալը, ինչպէս որ յայտնապէս պիտի տեսնուի այն ընդարձակ գրուածքին մէջ զոր կպատրաստեմք ընդ առումբս «*ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄՏԱՆԵԼՈՅ ԿՍԹՈՒԼԿՈՒԹԵԱՆ ԻՀԱՅՍ*, իսկզբանէ անտի մինչեւ ցաւուրս մեր»:



ԱՌԱԿԻ

ՎԱՐԿ ԵՒ ՏՂԱՅ,

Երկընցուց տըղայն թաթիկ
 Որ փըրցընէ վարդ գեղեցիկ .
 Թաթիկը ծակեց փըշիկ,
 Եւ ճըւաց նա յոյժ սաստիկ :
 Զըւարճութիւն մի սընտոի
 Տես որքան մեզ սուղ կընըստի :



ԿՐԻԱՅ ԵՒ ՄՈՂԷՍ.

Խեղճ կրիայ, կանչեց մողէս :
 — Ինձի խեղճ ինչո՞ւ կըսես :
 — Հապա դուն ո՞ւր որ քալես՝
 Տունդ ալ հետըդ կըկըրես :
 — Չէ, ես խեղճ չեմ, քո արեւ .
 Օգտակար բեռն է թեթեւ :

